



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

No 33-Ա/Ք

§ 29 | 01 | 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՏԱՐԿԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆՆԵՐԻ /ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՔԻՄԻԱ, ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,  
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ՖԻԶԻԿԱ/  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված Հավելվածի 1-ին գլխի 5-րդ կետի պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության դպրոցականների 2014-2015 ուսումնական տարվա.

- 1) <<Մաթեմատիկա>> առարկայի օլիմպիադայի անցկացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի.
- 2) <<Քիմիա>> առարկայի օլիմպիադայի անցկացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 2-ի.
- 3) <<Աստղագիտություն>> առարկայի օլիմպիադայի անցկացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 3-ի
- 4) <<Կենսաբանություն>> առարկայի օլիմպիադայի անցկացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 4-ի
- 5) <<Ինֆորմատիկա>> առարկայի օլիմպիադայի անցկացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 5-ի
- 6) <<Ֆիզիկա>> առարկայի օլիմպիադայի անցկացման ընթացակարգը՝ համաձայն հավելված 6-ի

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### 2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Մաթեմատիկա>> առարկայի

#### օլիմպիադայի կազմակերպման և անցկացման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Մաթեմատիկա>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են olymp.am կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է վեց խմբերով.  
I խումբ՝ 5-6-րդ դաս., II խումբ՝ 7-րդ դաս., III խումբ՝ 8-րդ դաս.,  
IV խումբ՝ 9-րդ դաս., V խումբ՝ 10-րդ դաս., VI խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել ավելի բարձր խմբի սովորողների օլիմպիադային:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել մաթեմատիկա առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի, ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է olymp.am կայքում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 7-ին ժամը 10:00-ին:
13. Պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնվում են մարզպետարան /քաղաքապետարան/ Օլիմպիադայի առաջին փուլի անցկացման օրը մինչև ժամը 17:00:

14. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 11-ը ժամը 18:00:
15. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:
16. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած 8-ից 12-րդ դասարանների աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. փետրվարի 21-ին՝ սկիզբը՝ ժամը 10:00-ին:
18. Օլիմպիադայի երկրորդ և երրորդ փուլերի տարբերակները՝ ըստ դասարանների, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
19. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
20. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
21. Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը մինչև 2015թ. փետրվարի 25-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) էլեկտրոնային հասցեով:
22. Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները, պատասխանների ձևաթղթերը և արդյունքները տեղադրվում են [olymp.am](http://olymp.am) կայքում:
23. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:
24. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 16-ին և 17-ին սկիզբը՝ ժամը 10:00-ին:
25. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
26. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
27. Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:
28. Տեղեկությունները կարելի է ստանալ [olymp.am](http://olymp.am) կայքից:

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### 2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Քիմիա>> առարկայի

#### օլիմպիադայի կազմակերպման և անցկացման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Քիմիա>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են [olymp.am](http://olymp.am) կայքում:
3. ՀՀ դպրոցականների քիմիա առարկայի օլիմպիադայի կազմակերպում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է երեք խմբերով.  
I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել ավելի բարձր խմբի սովորողների օլիմպիադային:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել քիմիա առարկայի մասնագետներ:
8. Օլիմպիադայի առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է [olymp.am](http://olymp.am) կայքում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 9-ին ժամը 12:00-ին:
13. Պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնվում են մարզպետարան /քաղաքապետարան/ Օլիմպիադայի առաջին փուլի անցկացման օրը մինչև ժամը 18:00:
14. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 13-ը ժամը 18:00:
15. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:

- 16.Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
- 17.Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. փետրվարի 25-ին՝ սկիզբը՝ ժամը 10:00-ին:
- 18.Օլիմպիադայի երկրորդ և երրորդ փուլերի տարբերակները՝ ըստ դասարանների, կազմում է Հանրապետական առարկայական հանձնաժողովը:
- 19.Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
- 20.Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
- 21.Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզային կրթության վարչությունը մինչև 2015թ. մարտի 7-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) էլեկտրոնային հասցեով:
- 22.Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները, պատասխանների ձևաթղթերը և արդյունքները տեղադրվում են [olymp.am](http://olymp.am) կայքում:
- 23.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:
- 24.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 25-ին և 26-ին սկիզբը՝ ժամը 10:00-ին:
- 25.Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
- 26.Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
- 27.10-12-րդ դասարանների երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են քիմիայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:
- 28.Տեղեկությունները կարելի է ստանալ [olymp.am](http://olymp.am) կայքից:

Հավելված 3  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2015 թվականի հունվարի 29-ի N 33-Ա/Ք հրամանի

#### ԸՆԹՅՑԱԿԱՐԳ

2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Աստղագիտություն>> առարկայի  
օլիմպիադայի կազմակերպման և անցկացման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Աստղագիտություն>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են [olymp.am](http://olymp.am) կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է 10-12-րդ դասարաններում սովորող աշակերտների համար՝ մեկ տարբերակով:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել օլիմպիադային: Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
6. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ֆիզիկա և աստղագիտություն առարկաների մասնագետներ:
7. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
8. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
9. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:
10. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է [olymp.am](http://olymp.am) կայքում:
11. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 11-ին ժամը 12:00-ին:
12. Դպրոցի տնօրինությունը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզային կրթության վարչություն, նույն օրը մինչև ժամը 18:00:
13. Մարզի կրթության վարչությունը պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 16-ը ժամը 18:00:
14. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:
15. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
16. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. մարտի 2-ին ժամը 10:00-ին:
17. Օլիմպիադայի բոլոր փուլերի տարբերակները կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:

18.Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:

19.Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզային կրթության վարչությունը մինչև 2015թ. մարտի 7-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) էլեկտրոնային հասցեով:

20.Երկրորդ փուլի հաղթողները պարզևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:

21.Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները և արդյունքները տեղադրվում են [olymp.am](http://olymp.am) կայքում:

22.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից առանձնացված կենտրոնում:

23.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 30-ին, սկիզբը՝ ժամը 10:00-ին:

24.Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:

25.Երրորդ փուլի հաղթողները պարզևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:

27.Երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են աստղագիտության միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:

28.Տեղեկությունները կարելի է ստանալ [olymp.am](http://olymp.am) կայքից:

Հավելված 4  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2015 թվականի հունվարի 29-ի N 33-Ս/Ք հրամանի

#### **ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

### **2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Կենսաբանություն>> առարկայի օլիմպիադայի կազմակերպման և անցկացման**

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Կենսաբանություն>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են [olymp.am](http://olymp.am) կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է երեք խմբերով.  
I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել ավելի բարձր խմբի սովորողների օլիմպիադային:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել կենսաբանություն առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
10. Մարզային վարչությունը մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է [olymp.am](http://olymp.am) կայքում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 12-ին ժամը 12:00-ին:
13. Դպրոցի տնօրինությունը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզային կրթության վարչություն, նույն օրը մինչև ժամը 18:00:
14. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 16-ը ժամը 18:00:
15. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:
16. Օլիմպիադայի երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. մարտի 7-ին՝ սկիզբը՝ ժամը 10:00-ին:
18. Օլիմպիադայի երկրորդ և երրորդ փուլերի տարբերակները՝ ըստ դասարանների, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
19. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
20. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:



21.Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզպետարանի /Երևանի քաղաքապետարանի/ համապատասխան վարչությունը մինչև 2015թ. մարտի 11-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) էլեկտրոնային հասցեով:

22. Օլիմպիադայի առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները, պատասխանների ձևաթղթերը և արդյունքները տեղադրվում են [olymp.am](http://olymp.am) կայքում:

23. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրերում:

24.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 22-ին և 23-ին սկիզբը՝ ժամը 10:00-ին:

25.Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:

26.Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:

27.Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են <<Կենսաբանություն>> առարկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:

28.Տեղեկությունները կարելի է ստանալ [olymp.am](http://olymp.am) կայքից:

Հավելված 5  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2015 թվականի հունվարի 29-ի N 33-Ս/Ք հրամանի

## **ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

### **2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Ինֆորմատիկա>> առարկայի**

#### **օլիմպիադայի կազմակերպման և անցկացման**

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Ինֆորմատիկա>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են [olymp.am](http://olymp.am) կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է 10-12-րդ դասարաններում սովորող աշակերտների համար՝ մեկ տարբերակով:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել օլիմպիադային:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ինֆորմատիկա առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզային վարչություն:
10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է [olymp.am](http://olymp.am) կայքում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 13-ին ժամը 12:00-ին՝ օնլայն եղանակով: Օլիմպիադայի անցկացման գործընթացին և ստուգման համակարգին ծանոթանալու նպատակով փետրվարի 10-ին, ժամը 14-ին կանցկացվի փորձնական, ուսուցողական փուլ:
13. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:
14. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
15. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. մարտի 4-ին ժամը 10:00-ին՝ օնլայն եղանակով:
16. Օլիմպիադայի բոլոր փուլերի տարբերակները կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
17. Երկրորդ փուլի արդյունքները տեղադրվում են [olymp.am](http://olymp.am) կայքում:
18. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
19. Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները և արդյունքները տեղադրվում են [olymp.am](http://olymp.am) կայքում:

20. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:
21. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 28-ին և 29-ին, սկիզբը՝ ժամը 10:00-ին:
22. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
23. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
24. Երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:
25. Տեղեկությունները կարելի է ստանալ olymp.am կայքից:

Հավելված 6  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2015 թվականի հունվարի 29-ի N 33-Ա/Ք հրամանի

### **ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

#### **2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Ֆիզիկա>> առարկայի**

#### **օլիմպիադայի կազմակերպման և անցկացման**

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Ֆիզիկա>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են olymp.am կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:

4.Օլիմպիադան անցկացվում է հինգ խմբերով.

I խումբ՝ 8-րդ դաս., II խումբ՝ 9-րդ դաս., III խումբ՝ 10-րդ դաս., IV խումբ՝ 11-րդ դաս., V խումբ՝ 12-րդ դաս.:

5.Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել ավելի բարձր խմբի սովորողների օլիմպիադային:

6.Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:

7.Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ֆիզիկա առարկայի մասնագետներ:

8.Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:

9.Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:

10.Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) հասցեով:

11.Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է [olymp.am](http://olymp.am) կայքում:

12.Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 14-ին ժամը 10:00-ին:

13.Պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնվում են մարզպետարան /քաղաքապետարան/, Օլիմպիադայի առաջին փուլի անցակցման օրը, մինչև ժամը 17:00:

14.Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 17-ը ժամը 18:00:

15. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:

16. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած 9-ից 12-րդ դասարանների աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:

17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. փետրվարի 28-ին՝ սկիզբը՝ ժամը 10:00-ին:

18. Օլիմպիադայի երկրորդ և երրորդ փուլերի առաջադրանքները՝ ըստ դասարանների /9-ից 12-րդ դասարաններ/, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:

19.Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:

20.Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:

21.Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզային կրթության վարչությունը մինչև 2015թ. մարտի 4-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ [info@olymp.am](mailto:info@olymp.am) էլեկտրոնային հասցեով:

22.Առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները և արդյունքները տեղադրվում են olymp.am կայքում:

23.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:

24.Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 19-ին և 20-ին սկիզբը՝ ժամը 10:00-ին:

25.Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:

26.Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:

27.Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են ֆիզիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:

28.Տեղեկությունները կարելի է ստանալ olymp.am կայքից: